

# ՍԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

### Հարգելի՝ ղիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց քողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

### 1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ը.

- 1) որոտ-նդոստ, ան-նդմեջ, ան-նտել, ակ-նդես
- 2) մք-նկա, գահ-նկեց, այլ-նտրանք, խոչ-նդոս
- 3) ան-նկեր, մարտ-նչել, դանդաղ-նթաց, ան-նդունակ
- 4) հնդկ-նկույզ, երկ-նտրանք, ան-ստօդյուտ, ճեպ-նթաց

### 2 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում մ.

- 1) ճա-փա, թ-թիկ, զա-թիկ, ա-բարբառ
- 2) ը-քոնել, ա-պամած, թու-թ, գա-փո
- 3) ա-փոփել, հա-բավ, ա-բարտավան, ա-բավ
- 4) ա-թիոն, ա-բոխ, բա-թիոն, ա-բասիր

### 3 Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին.

- 1) ի(մի)բերել, վարսուն(մեկ), գեր(ծանր), գլուխ(գործոց)
- 2) առ(ընթեր), երկ(կողմ), շարվե(շարան), հազիվ(հազ)
- 3) հետ(այսու), ամսե(ամիս), ըստ(այնմ), ի(սպառ)
- 4) ավի(հանում), ի(հեճուկս), հյուսիս(արևմտյան), խառն(ի)խուռն

### 4 Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով.

- 1) ՎՈԼՖԳԱՆԳ ԳՅՈՒԹԵ, ՀԻՆ ՀՈՒՍՍԱՏԱՆ, ԵՌՅԱԿ ԴԱՇԻՆՔ, ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՒՄ
- 2) ԱՖԴՎԱՍՏԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՄԵԾ ՍԱՍԻՒ, ԴՈՆԻ ՈՒՍՏՈՎ, ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ
- 3) ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, ԶՈՐԻ ՄԻՐՈ, ԿԱՊՈՒՏԱՆ ԼԻԾ
- 4) ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ԼԱ ՄԱՆԾ, ԶԵՆՈՎ ՕՀԱՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

### 5 Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) անշեջ, մշտաբորբ, անմար, անխոտոր
- 2) դրվատել, կշտամբել, պախարակել, դատափետել
- 3) խանդաղատանք, փաղաքշանք, գորովանք, սեթենքանք
- 4) բիրտ, դժնյա, անողոք, անազորույն

### 6 Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից.

- 1) շնորհաշատ-տաղանդազուրկ, աղմկոտ-հանդարտ, պղծված-սրբազործված
- 2) գիտուն-քերուս, նոսր-խիտ, ծածկամիտ-բացրերան
- 3) բուժիչ-ախտածին, օրինել-բանադրել, կարծրատիպ-ազատախոհ
- 4) նշանակալի-չնշին, հիասքափություն-ոգևորություն, խելամիտ-անկշողադատ

7

**Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Ավանդությունը մեզ է փոխանցել այս պատմությունը հերոս իշխանի մասին:
- 2) Ակուրատում հանգան վերջին կրակները, և վրանախումքը ընկղմվեց խավարի մեջ:
- 3) Դժվար էր առանց սարսուի նայել հողածածկ այդ խուղերի մեջ բնակվող մարդկանց դեմքերին:
- 4) Հայ ժողովուրդն իր խորին երախտիքն է հայտնում Ֆրանսիային՝ ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծ ընդունելու համար:

8

**Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

- 1) մեծահասակ, բացատ, մոխրագույն, մրցավազք
- 2) համահունչ, կապկամարդ, ուսումնատենչ, կայուն
- 3) նոնականետ, ինքնահավան, շքեղազարդ, վերհուշ
- 4) խցան, ընդունակ, միջոց, ապերասան

9

**Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -եր վերջավորությամբ:**

- 1) գարեջուր, ակնարիթ, ընդլիմախոս, որմնասյուն
- 2) գծագիր, առանձնատուն, կաղնեփայտ, շնաձուկ
- 3) սառցաշերտ, հիմնապատ, մեղրամոմ, դեղաբույս
- 4) նախագիծ, որսաշուն, պատմագիր, մեծատառ

10

**Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

- 1) Ուսուցուիին իրահանգեց, որ առաջին շարքը պիտի վազի մինչև աղբյուր, մյուսը՝ սղոցարաններ:
- 2) Մեզ համարներ տվեցին ու խմբերի բաժանեցին. զույգ թվակիրները մի քանի քայլ առաջ եկան:
- 3) Ինձ խմբի ավագ նշանակեցին, ու ես տեսա, որ թեկուզ փոքրիկ, թեկուզ յոթհոգանոց խմբի գլուխ կանգնելն ինձ դուր է գալիս:
- 4) Դասարանների միջև անցկացվող մրցությունն ավարտվեց, և նրանք՝ և՛ պարտված ութերորդցիները, և՛ հաղթած յոթերորդցիները, բարձր աղաղակեցին:

11

**Ո՞ր նախադասության մեջ դերանուն չկա:**

- 1) Թագավորը տագնապած ու հուզախոռվ հայտնում է բոլորին, որ խուճապի մեջ շընկնեն և սպասեն նոր լուրերի
- 2) Տեսնելով ախոռապետի լկահությունը՝ Վասակը՝ իբրև արժանապատիվ հայորդի, ապշում է և մտածում, որ հայերը երբեք նման բան չեն անի:
- 3) Փայտահատը հետ քաշվեց ու սոսկումով նայում էր, թե ինչպես են վերքից ընկնում կաթիները՝ մերք կարմիր արյան նման, մերք վծիտ արցունքի պես:
- 4) Օրերից մի օր Արշակը սպարապետի հետ գնում է՝ շրջելու Ծապուիի ախոռներում, որտեղ պահվում էին ցեղական հազվագյուտ նժույգներ:

12

**Ո՞ր նախադասության մեջ դերանվան սխալ գործածություն կա:**

- 1) Ոչ մեկը չէր հասկանում՝ ինչն էր նրա զայրույթի պատճառը:
- 2) Իմ վրայի բծերը ցույց տալուց առաջ մաքրի՛ ձեռքերդ:
- 3) Սույնով հայտնում ենք մեր շնորհակալությունը Զերդ մեծությանը՝ մեր հրավերն ընդունելու համար:
- 4) Գործարանի ամբողջ բանվորների շրջանում տարածվում էր ըմբռատության ալիքը:

**13 Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:**

- 1) Նա վաղուց էր ինձ խոստովանել, թե սիրահարված է այդ աղջկան:
- 2) Նա գիշարաց էր, երեսը՝ անվա, աչքերի սպիտակուցները՝ դեղնած, մազերը՝ զգգված, դեմքը՝ մագաղաթի պես գունատ:
- 3) Լևոնը փաթաթվեց մոր պարանոցին և սկսեց բարձր ձայնով հեծկլտալ:
- 4) Զգացի, որ տղան շատ վրդովվեց իմ այդ խոսքից, և փորձեցի մեղմել անհաճող իրավիճակը:

**14 Տրված հատվածներից քանիսո՞ւմ անվանական անդեմ նախադասություն կա:**

- Անուժ ցավի ցուրտ կապար...  
Սահացողի տխուր կյանք.  
Անմիիթա՞ր, անսպա՞ն  
Վիատության հեկեկանք...
  - Լոռությո՞ւն, լռությո՞ւն, լռությո՞ւն անսահման:
  - Ուկե տեսիլնե՞ր, անուրջների լո՞ւյս:
  - Լինե՞ր հեռու մի անկյուն,  
Լինե՞ր մանկան արդար քուն:
- 1) չորսում
  - 2) մեկում
  - 3) երկուսում
  - 4) երեքում

**15 Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:**

- 1) Կախարդական մի շղթա կա երկնքում  
Աներևույթ, որպես ցավը խոր հոգու:
- 2) **Տեօրեն** Հակոբյանի և այցելուի միջև սկսվեց մի հետաքրքիր քանավեճ:
- 3) Փոքրիկն անզգուշորեն կպավ սեղանին և **բաժակը** կոտրեց:
- 4) Ապրել ազնիվ, աշխատել նվիրումով, օգտակար լինել մարդկանց. **սրանք** էին ավագ ընկերոջս կարգախոսները:

**16 Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- 1) Բայց, անշուշտ, բանը բանից անցել էր:
- 2) Ժողովուրդը հեքիաթների մեջ է արտահայտում իր իղձերը:
- 3) Փոքր գրողները հավերժական հանճարների լուծը կրողն են:
- 4) Ես կցանկանայի, որ հայ ժողովուրդը բարձր պահեր ազգային արժանապատվությունը:

**17 Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ չկա:**

- 1) Բայց շուրջս քող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի:
- 2) Իմ աչքերի մեջ այնքա՞ն կրակներ եմ մարել ես:
- 3) Ես երգել եմ քո հոգին, քո ժափոր լուսավոր:
- 4) Միայն գիտեն, որ կյանքում ինչ-որ երգեր եմ գրել:

18

**Ո՞ր նախադասության մեջ բայական անդամի լրացում չկա:**

- 1) Որտե՞ղ են ննջում իմ վաղնջական առավոտները:
- 2) Ժամանակները խառն են ու խրթին. ուժգին հողմը ննջում է, մեղմ հովը՝ լրբուտանում:
- 3) Գետի վշշոցը ներքևում դառնում է շառաչ:
- 4) Հավերն աղոթք են անում քնելուց առաջ:

19

**Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված չէ  
(նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ծերունին թափ տվեց ոտքերի փոշին և **առանց շրջելու** հեռացավ քաղաքից:
- 2) **Կամրջի վրայով անցնելիս** աջ ու ձախ չէր նայում:
- 3) Անհրաժեշտ էր **մի քանի օրով գյուղ գնալ:**
- 4) Բայց այգեպանը չդադարեց **այզին մշակել:**

20

**Ո՞ր նախադասության մեջ միջակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նա փղձկաց վաղուց կարիք էր զգում ազատվելու հոգեկան ծանր բեռից:
- 2) Այս հարցը կարող է անհեթեր ու տաղտկալի թվական կամ էլ ապշեցնել ու հանկարծակի բերել չէ որ միշտ մեր մոլորակի մի կողմում ցերեկ է մյուս կողմում զիշեր:
- 3) Հենց որ դասագրքերը բաժանեցին ուսուցչուհին նա մի նիհար սուր քթով օրիորդ էր պատվիրեց բացել ութունիններորդ էջը:
- 4) Մյուս դանդաղաշարժը ամրակուու կրիան փոքր-ինչ գերազանցում է խխունջին նա ունի յոր մետր-ժամ արագություն:

21

**Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հնչյունական ամենահին գիրը սեպագիրն է: Այժմ, երբ սովորում ենք իին սեպագրերը կարդալ, իմանում ենք նաև այն լեզվի բառերը, որով գրված են տվյալ սեպագրերը: Այս գիրը կոչվում է սեպագիր, քանի որ կազմված է սեպածն նշաններից: Կան երեք տեսակի սեպագրեր՝ վանկագրեր, գաղափարագրեր, ինչպես և որոշիչներ, որոնք ցույց են տալիս տվյալ սեպագրի ինչ լինելը՝ երկիր, քաղաք, գետ և այլն:
  2. Պատկերագրերն ու գաղափարագրերը հնչյունական գիր չեն, այսինքն՝ որևէ լեզվի բառեր չեն արտահայտում: Սենք կարող ենք սովորել այդ գրերը կարդալ, բայց չիմանալ, թե ինչպես են հնչել այդ գրերով նշանակված բառերը:
  3. Պատկերագրերից հետո մարդիկ անցան գաղափարագրերին: Գաղափարագիրն արդեն մի քայլ առաջ էր պատկերագրից: Նրա նշանները նույնպես պատկերներ էին, բայց գաղափարագրերի տվյալ պատկերը կարող էր ունենալ մի քանի նշանակություն:
  4. Գրերի շատ տեսակներ կան: Ամենահին տեսակը պատկերագիրն է: Մարդիկ ժայով կամ քարի վրա նկարում էին որևէ կենդանի առարկա հենց այդ կենդանու կամ առարկայի իմաստով: Օրինակ, նկարում էին այծ, որը հենց այծ էլ նշանակում էր:
- 1) 2, 1, 3, 4
  - 2) 4, 3, 2, 1
  - 3) 2, 1, 4, 3
  - 4) 4, 1, 3, 2

22

Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Եվ տեսնում է ոչ երազ քնի մեջ, ոչ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա»:

- 1) «Հայոց պատմություն», Սովորելու Խորենացի
- 2) «Վերք Հայաստանի», Խաչատուր Աբովյան
- 3) «Սամվել», Ռաֆֆի
- 4) «Վարդանանք», Դերենիկ Դեմիրճյան

23

Ո՞ր հատվածն է Նահապետ Զուշակի «Ես աչք ու դու լոյս, հոգի» հայրենից:

- 1) Մըտիկ իմ եարին արեք,  
զինչ հազեր՝ ամէնն է կանանչ...
- 2) Ապա յիմ սրտէս ի դուրս՝  
յերկրոք յերկիր թափեցաւ...
- 3) Երբ զիս ի քենէ զատեն,  
քան զմեռնելն այլ ճար չի լինի:
- 4) Երեկ ցորեկով քարով  
տանեին մէկ եար մի ճորով...

24

Նշված հարցադրումներից ո՞րը չկա Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում»:

- 1) արթնացնել հայոց ազգային արժանապատվության զգացումը
- 2) նկարագրել ժողովրդի կյանքն ու նվիրական զգացմունքները՝ սերը, բարեկամությունը, ծնողասիրությունը
- 3) ներկայացնել կրոնի երկրորդական դերը հայ ժողովրդի գոյության հարցում
- 4) կենդանություն տալ անձնազոհ հայորդիների գործերին

25

Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր գլխում է պատկերվում Սամվելի և նրա սիրած աղջկա՝ Աշխենի հանդիպումը:

- 1) «Արտասուրի աղբյուրը»
- 2) «Տարոնի առավոտը»
- 3) «Կնոջ խորհուրդը»
- 4) «Արաքսի որոգայթները»

26

Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի ո՞ր հերոսի ուխտն է.

«Ես չեմ վերադառնա իմ ընտանյաց զիրկը այնքան ժամանակ, քանի դեռ վերջին հազարացին հալածված չէ հայրենիքի սահմաններից»:

- 1) Յլիկ Ամրամի
- 2) Աշոտ Երկարի
- 3) Գևորգ Մարզպետունու
- 4) Վահրամ սեպուհի

27

Ալեքսանդր Շիրվանզաղեի «Զառու» վեպի ո՞ր կերպարի մասին է հետևյալ հեղինակային խոսքը.

«Նա կանգնած էր երկու մարդու միջև՝ մեկը՝ միլիոնների ժառանգը, մյուսը՝ այն աղքատ երիտասարդը, որ իր բնտանիքը պահում էր մասնավոր դասերով»:

- 1) Արշակի
- 2) Սիրայելի
- 3) Մարտիքսանյանի
- 4) Սմբատի

28

**Դանիել Վարուժանի ո՞ր բանաստեղծություններից են տրված հատվածները:**

- |  |                                      |
|--|--------------------------------------|
| ա. Ու պայքա՞ր, պայքա՞ր, պայքա՞ր երգեցի.<br>-Ձեզի ընծա՞ր, հայ մարտիկներ-<br>Գրիշ եղավ անքոր սրբություն հնոցի...<br>- Ձեզի ընծա՞ր, քաջ մարտիկներ...  | 1. «Հունձք կը ժողվեմ...»<br>2. «Չոն» |
| բ. Գյուղակներն առաջունները մինչև<br>Կը տարածվի մեր մայրությունը հողի.<br>Գարունն եկա՞վ, չի բավեր ձյունը քեթև<br>Ալ ծածկելու մեր մերկությունը հղի:  | 3. «Յորյանի ծովեր»                   |
| գ. Ցորեն, կակաչ, կարտով,<br>-Կաքավը կու լա,<br>Կապեցի մեկ նարոսով,<br>-Ձեռքերն են հինա:  | 4. «Արտերուն հրավերը»                |
| դ. Հովե՞ր կ'անցնին.<br>Այնքան կ'հորդի, կը կատղի դաշտը հուռքի,<br>Որ պիտի հոն արածող ուլը խեղդի:<br>Գոգին մեջն ալեծածան հովհատին<br>Ծովե՞ր կանցնին: |                                      |
- 1) ա- 3, բ- 2, գ- 1, դ-4
  - 2) ա- 2, բ- 3, գ- 4, դ-1
  - 3) ա- 1, բ- 3, գ- 4, դ-1
  - 4) ա- 2, բ- 4, գ- 1, դ-3

29

**Հատվածներից ո՞րը Վահան Տերյանի բանաստեղծություններից չէ:**

- 1) Բարբարոսներ շատ կրգան ու կանցնեն անհետ,  
Արքայական խոսքը մեր կըմնա հավետ:
- 2) Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց.  
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...
- 3) Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,  
Օղակերով լույս աստղերը մեկմեկու:
- 4) Լուսամփոփի պես աղջիկ, աստվածամոր աչքերով,  
Թոքախտավոր, թափանցիկ, մարմնի պես երազի...

**30 Տրված հատվածներից ո՞րն է Ավետիք Իսահակյանի «Արու-Լալա Մահարի» պոեմից:**

- 1) Գիշերն ահարկու՝ և սև, և հսկա, մի չղջիկի պես թևերը փողեց,  
Անձիր թերեր իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անափ:
- 2) Ե՛վ անապատում, և հավերժական  
Անուրջում հոգիս կլսե, կզգա  
Ղողանջը զանգի տիեզերական  
Եվ մեղմ կզգվե տատասկին դժնյա:
- 3) Գնա՛, քարավանն, ինձ հետդ քա՛րշ տուր  
Օտար, ամայի ճամփերի վրա.  
Ուրտեղ կիոզնիս՝ գլուխս վար դիր  
Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
- 4) Ո՛չ իշխանություն, ո՛չ կոխվ, ո՛չ կին  
Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:  
Ղողանջն է միայն ձիգ քարավանի  
Հեռավոր, անհայտ ճանապարհների  
Հրապույրներով դյութում իմ հոգին  
Թափառումների տենչով անմեկին...

**31 Եղիշե Զարենցի «Տաղ անձնական» բանաստեղծության ո՞ր բառն է բաց քողած:**

Դեպի երկի նր պիտի զնամ, դեպի եզերքը ..... –  
Իմ բա՛րձը, հին ու աստղային երազների ճանապարհով...

- 1) Անհունի
- 2) Ամեհի
- 3) Ամենտի
- 4) Բարձունքի

**32 Ո՞ր բառը պետք է տեղադրել բաց քողած տեղում:**

Փայտահատը իին երգն էր կրկնում  
Եվ տաք սղոցն էր յուղում իր կրկին,  
Թեղին անտարբեր ականջ էր դնում  
Տապալված կաղնու խուլ ..... :

- 1) չարչարանքին
- 2) տառապանքին
- 3) հառաչանքին
- 4) արձագանքին

**33 Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Մենք եղեգների մեջ թաքնված՝ հետևում էինք այդ քոչունների խելացի որսին:
- Բայց որքան հեռանում էր, այնքան ավելի էր զգում ինչ-ոք մեկի  
անհանգստություն պատճառող ներկայությունը:
- Եթե հնարավոր լիներ այդ բռպեին զնալ որևէ տեղ և թեկուզ ամբողջ կյանքում  
բոլորովին մենակ մնար, ապա նա դա կհամարեր երջանիկ ապաշխարություն:
- Բայց վերջում հանկարծ անհանգստացավ, ու խղճի՝ մի պահ քնած խայթը նորից  
արթնացավ:

34

#### Բառերից քանիս՞մ ի ձայնավորի հնչյունափոխություն կա.

ընկնել, ընչացք, ընչաքաղ, ընդունակ, ընձուղտ, ընկեր:

35

#### Տրվածներից քանի՞սը ունեն իրենց համանունը.

մկան, թոռ, կար, ջոկ, ստեր, դանակ, դաս, երգ, երգեր, պատի:

36

#### Տրվածներից քանի՞սն են սահմանական եղանակի ժամանակաձևեր.

ասում են, դառնալու է, մոտեցան, վերցրի, գիտեին, հանգստանայիր, սառչեմ, կզարմանայի, չփոշմանեցի, չխաղաս, չես նեղանա, չի պատասխանելու:

37

#### Տրվածներից քանի՞սն են բաղադրյալ ժամանակաձևեր.

ցավ զգաց, երգչուիի պիտի դառնամ, մի՛ վիատվիր, չի հավատա, չպետք է ներես, երես մի՛ տուր, պետք է զնամ, տարավ-բերեց, ցավ կապրեմ, հարց չեմ տա:

38

#### Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:

Երեկոն թանձրանում էր Ավարայրի դաշտավայրում: Պարսից գորքը սկսեց գունդ առաջանալ դեպի գետի եզերքը: Հայկական զորաբանակը նույնպես սկսեց տեղաշարժվել, մեջընդմեջ դասավորվել՝ խիտ շարքեր կազմելով: Վարդանը երկար խորհում էր և խորհրդակցում՝ ում նշանակի որպես զորագլուխ:

39

#### Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.

1. ուսանողական,
2. դիտողություն,
3. գործնական,
4. պիտանի,
5. հանդիսատես,
6. բարեկամական,
7. հետաքրքրություն,
8. ընթացիկ,
9. արդյունավետ:

40

#### Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ ածանցակոր են.

1. հյուլե,
2. աղամանդ,
3. նոնենի,
4. որևէ,
5. հորդարուխ,
6. լուսավառ,
7. ահեղ,
8. մահակ,
9. տարբեր:

41

#### Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:

Բարու գալով՝ մի օր հանդիպեցի ուսուցչիս. որքա՞ն փոխվել էր նա. զգզգված նորուքը ճերմակել էր բամբակի պես, արագաշարժ ոտքերը թուլացել էին, վառվորու աշքերը մարել էին մեռած աստղերի պես:

1. **Վառվորուն** –ածական, **մեռած** – ե խոնարհման բայ, չեզոք սեռ
2. **զալով** - անկանոն բայ, անորոշ դերբայ, **մի** - անորոշ դերանուն
3. **թուլացել էին** - ե խոնարհման բաղադրյալ բայածն, վաղակատար անցյալ, **որքա՞ն** - հարցական դերանուն
4. **զգզգված** –հարակատար դերբայ, չեզոք սեռ, **պես** – կապ, հետադրություն
5. **արագաշարժ** –մակրայ, **մարել էին** - դիմավոր բայ, սահմանական եղանակ

42

## Նշել պարզ նախադասությունների համարները:

- Բայց այդ առյուծը իր ծերուկ ծնողի առջև գառնուկի պես հեզ է, իր գյուղի աղջկների դիմաց շիկնում է ամոքխած:
- Թագավորն ընկավ մտածունքների մեջ և մորուսով ծնոտը հենեց աջին:
- Ամենքը հետաքրքրված առաջ էին գալիս՝ տեսնելու սպանվածի կնոջը՝ անձանոթ իշխանուին:
- Արշակը շփորչված մտածում էր այդ լուրը ամբողջ երկրում տարածելու և ամեն տեղ հասցնելու մասին:
- Չանցած մի քանի վայրկյան՝ ներս մտավ իշխանը՝ ըստ սովորության՝ ձգված կանգնելով բոլորի առջև:
- Հայ ժողովուրդը՝ անզեն, սակավաթիվ, անպաշտպան, սարսափի ու անորոշության մեջ էր:

43

## Նշել այն պատկերավորման–արտահայտչական միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում.

- հանգավորում,
- համեմատություն,
- չափազանցություն,
- փոխարերություն,
- անձնավորում:

Իմ թախիծն էլ այն ամպի պես  
Ցնորում է քնքշաբար,  
Բոցավառվում՝ հիշելով քեզ  
Եվ արտասվում քեզ համար:

44

## Նշել այն համարները, որոնցում նշված են հատվածներ Ակսել Քակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքից:

- Հենց այդ օրից էլ գլխին կարմիր շոր կապած աղջկը , որ մինչ այդ իմ քառասուն աշակերտներից մեկն էր, բոլորից զոկվեց և իմ աշքում դարձավ այն կետը, որի շուրջ պտտվում էր իմ ներքին աշխարհը:
- Սուաջին ձիավորը աչքը պարիսպներից չէր հեռացնում: Նրա գլխում բերդի պատմությունն էր, մագաղաթյա մատյաններում գրած խոսքերը իշխանական օրերի մապին...
- Ինչո՞ւ եկավ այգին, արդյոք Սոնան մանկության առվակի ջրե՞րն էր կարոտել, քե՞զ պատահմանք մոտեցավ հնձանի դրնակին՝ մտածելով, որ ներսն էլ ամայի է, ինչպես այգում:
- Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակն անասելի բափով իջավ կնոջ թիկունքին:

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրիք Շիշտ է, Մխալ է, Զգիտես տարրերակներից որևէ մեկը:**

1. Գոյականը, ածականը, թվականը կարող են կիրառվել փոխանվանաբար:
2. Հայերենը ունի տասը խոսքի մաս, որոնցից նյութական իմաստ են արտահայտում միայն գոյականը, ածականը, թվականը, դերանունը և բայը:
3. Կապերը և շաղկապները արտահայտում են հարաբերություններ, և դրանց մեջ մասը նախադասության անդամ չի դառնում:
4. Եղանակավորող բառերը (վերաբերականներ) արտահայտում են դատողական վերաբերմունք, իսկ ձայնարկությունները՝ զգացական:
5. Հայերենում դեմքի կարգը բնորոշ է բայերին և դերանուններին, իսկ եղանակի կարգը՝ եղանակավորող բառերին և բայերին:
6. Կան բառեր, որոնց խոսքինասային պատկանելությունը նախադասությունից դուրս որոշելն անհնար է:

## Բ մակարդակ

46

Ո՞ր տարրերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը սխալ նշված.

- 1) ԱՀԴ - 184
- 2) ԼԴ - 34
- 3) ՄՀԶ - 276
- 4) ՍԹ - 2009

47

Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավաճիկ կա.

- 1) գոեհիկ, անմխիթար, անշրջահայաց, անմատչելի
- 2) գրքասեր, ոտնահարել, զվարճանալ, ձեռնբաց
- 3) չնշին, հակաղրվել, կրթություն, կրնկակոխ
- 4) կոփամարտ, դասընկեր, գրախոս, գրավ

48

Տրված բառերից քանիս՝ մեկից ավելի հնչյունավորված կա.

մրցակցություն, հրակայուն, կարծրանալ, շրբներկ, ծնրադրել, շրջադարձ, մտացրիկ, վշտարել, սնամեջ, բռնակցում:

- 1) հինգում
- 2) չորսում
- 3) երեքում
- 4) երկուսում

49

Տրված բառերից քանի հոմանշային գույգ է հնարավոր կազմել.

մեղադրյալ, երկշոտ, կրղա, բուրյան, ապակե, բազին, եղանիկ, վեհերոտ, անդրավարտիք, գավար, եկեղեցի, տաքաստ:

- 1) չորս
- 2) մեկ
- 3) երկու
- 4) երեք

50

Ո՞ր շարքի ոչ բոլոր բառակապակցություններն են դարձվածքներ:

- 1) սպիտակ ազռավ, սև կաչաղակ, ծեր աղվես
- 2) տունը քանիդել, կարապի երգ, կատվի դրախտ
- 3) ձեռնոց նետել, երկու ոտքով կաղալ, սպիտակ ջարդ
- 4) երկու տիրոջ ծառա, գլուխը յուղել, սառույցը շարժվել

51

Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) բոժոժ, հելլեն, հրաման, երաշտ
- 2) շաքար, նշխար, կրան, ամբարտակ
- 3) գողոն, գուշակ, եղունգ, նամիշտ
- 4) կաղամբ, ընկույզ, բազում, սնոտի

52

Ո՞ր շարքի բոլոր բառերն են հապավումներ:

- 1) շիմադր, մարզկենտրոն, բուժքույր, գաղրօջախ
- 2) գյուղթղթակից, մուլտֆիլմ, բնակվարձ, ֆիզմաք
- 3) ջրմուղ, սոցիարքուն, խնայդրամարկղ, ուսմասվար
- 4) դրկից, պետապահովագրություն, Եվրախորհուրդ, ԿԲ

53

Ո՞ր շարքի բոլոր բառերն են նմթարկվում միայն ի հոլովման:

- 1) փոթորիկ, առու, վայրկյան, սարդ
- 2) լույս, կաղնի, մանուկ, տարի
- 3) ձի, մրրիկ, եզ, քաղաք
- 4) գնչու, ավերում, շաբաթ, ծագում

54

Ո՞ր նախադասության մեջ դիմորդ հոդ կա:

- 1) Օրերս անցնում էին միայնության մեջ, տաղտկալի ու միօրինակ:
- 2) Սրբազն, քող այսուհետև ոչ մի արհավիրք չխափանի աղոթքը և եկեղեցուղ զանգերի դողանջը:
- 3) Սակայն հիշելով վերստին լույսիդ բարիքներն անհատ՝ Պարզեւած քեզնից համառ թշվառիս, Ըստ աղերսով քեզ պիտի պաղատեմ...
- 4) Ազգային գրադարանում մեծարում էին ներկայիս ամենահամբավավոր բանաստեղծներից մեկին:

55

Ո՞ր նախադասության մեջ Ժխտական դերբայ (Ճնարբայ) կա:

- 1) Թե՛ մորդ անգամ մտքից հանես,  
Ըստ մայր լեզուն չմոռանաս:
- 2) Երբ անտեղի հարց չեն տալիս, սուտ պատասխան չեն ստանում:
- 3) Չեր անցնում այդ փողոցով, որ պատահաբար չհանդիպի Աստղիկին:
- 4) Մենավոր իմ սիրտ, մոլորված թռչուն,  
Կարոտիդ կանչը չի հասնի նրան:

56

Հեռու բառը ո՞ր նախադասության մեջ նակրայ չէ:

- 1) Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ. աչքս է հեռուն:
- 2) Թե՛ ինչպես հանկարծ նա գնաց հեռու,  
Էլ չի՝ դառնալու, էլ չի՝ դառնալու:
- 3) Լինե՛ր հեռու մի անկյուն,  
Լինե՛ր մանկան արդար քուն:
- 4) Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար,  
Զգալ, որ դու կաս, և լինել հեռու:

**Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Կովկասի հայ բնակչության բոլոր խավերում ծայր առավ մի ծավալուն խանդավառություն:

1. բնակչության (ա. ենթակա, թ. հատկացուցիչ, գ. որոշիչ)
  2. բոլոր (ա. որոշիչ, թ. ձևի պարագա, գ. չափի պարագա)
  3. ծայր առավ (ա. բաղադրյալ ստորոգյալ, թ. պարզ ստորոգյալ, գ. ստորոգելի)
  4. խանդավառություն (ա. ուղիղ խնդիր, թ. հանգման խնդիր, գ. ենթակա)
- 1) 1-ա, 2-ա, 3-ա, 4-թ
  - 2) 1-զ, 2-զ, 3-թ, 4-զ
  - 3) 1-թ, 2-ա, 3-թ, 4-զ
  - 4) 1-թ, 2-թ, 3-ա, 4-ա

**Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (Երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Դու այնպես ես խոսում, կարծես քեզ ոչինչ չի հետաքրքրում:
2. Ես լուս հետևում էի, թե ինչպես էր նա հեռանում ինձանից:
3. Պարզ երևում էր, որ բոլորը նրանից դժգոհ էին:
4. Ինչու էր նա այդքան զայրացած՝ ես այդպես էլ չհասկացա:

- ա. ձևի պարագա
- թ. ուղիղ խնդիր
- զ. հանգման խնդիր
- դ. ենթակա
- ե. պատճառի պարագա

- 1) 1-ա, 2-զ, 3-թ, 4-դ
- 2) 1-թ, 2-ա, 3-զ, 4-դ
- 3) 1-ա, 2-զ, 3-թ, 4-ե
- 4) 1-ա, 2-զ, 3-դ, 4-թ

**Ո՞ր տարրերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:**

- 1) *Ինչ որ կատարվեց տաճարի պատերից դուրս՝ քաղաքի փողոցներում, անհնար էր մկարագրել:*  
Տաճարի պատերից դուրս՝ քաղաքի փողոցներում կատարված անհնար էր նկարագրել:
- 2) *Մենք ապրում ենք Գորիսի մեր խրճիրում, որ հայրս էր մի երկու տարի առաջ կառուցել:*  
Մենք ապրում ենք մի երկու տարի առաջ հորս կառուցած Գորիսի մեր խրճիրում:
- 3) *Այժմ ո՞ւմ սիրելի չէ Ակսել Բակունիցի «Նամակ ոռուաց թագավորին» պատմվածքը, որը ասք է մարդկային մեծ կյանքի մեծ ողբերգության մասին:*  
Այժմ ո՞ւմ սիրելի չէ Ակսել Բակունիցի «Նամակ ոռուաց թագավորին» պատմվածքը՝ մարդկային մեծ կյանքի մեծ ողբերգության մասին ասքը:
- 4) *Մեր քաղաքի մարդիկ, որոնք տակավին չեն մոռացել հողագործությունը, մի փոքր անվտան են ձեռք տալիս մատղաշ ծառերին:*  
Մեր քաղաքի՝ հողագործությունը տակավին չմոռացած մարդիկ մի փոքր անվտան են ձեռք տալիս մատղաշ ծառերին:

60

**Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

- 1) Նրան հայտնի էր իր հին ընկերների՝ իրեն ստորաբար խարելլը:  
Նրան հայտնի էր, որ իր հին ընկերներն իրեն ստորաբար խարել են:
- 2) Որքա՞ն լսվ է մարդկանց՝ քեզ լիովին վստահելլը:  
Որքա՞ն լսվ է, եթի մարդիկ քեզ լիովին վստահում են:
- 3) Թատրոնը չափից ավելի շատ սիրողը ի վերջո խեղդում է իր սիրելիին:  
Նա, ով չափից ավելի շատ է սիրում թատրոնը, ի վերջո խեղդում է իր սիրելիին:
- 4) Հրատապ խնդիր է երկու թունելախորշերի միանալը ճիշտ ժամկետում:  
Հրատապ խնդիրն այն է, որ երկու թունելախորշերը միանան ճիշտ ժամկետում:

61

**Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Մելանագույն թերև թիկնոցի մեջ պարուրված (1) աստվածային կեցվածքով (2) կանգնած էր Համլետը քեմի ծախակողմյան հաստվածում (3) աչքերում արցունքի երկու խոշոր կարիլ (4) որոնց դիպչելով (5) էլեկտրական լույսի շողերը քեկվում լցվում էին դահլիճ (6) ցրելով մութք: Հետո երբ քեմում եղած մարդիկ հեռացան (7) նա մոտենալով իր նման սևազգեստ մեկին (8) շշնչաց վերջինիս ականջն ի վար Մարդ էր Հորացիո...

- 1) 2, 4, 5, 8
- 2) 1, 2, 3, 8
- 3) 1, 3, 5, 6
- 4) 2, 3, 5, 7

62

**Ո՞ր խոսքը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեայի որ հերոսինն է:**

- 1.«Արդարն, մայրաքաղաքս ինքզինքը բախտավոր համարելու է ձեզ այես պատվական ազգայինի մը... Հայրենասեր անձ մը... Ազգասեր, ուսյալ, կրթյալ... Ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվադեմ մեկ մը իր մեջ ունենալու համար»:
  2. «Ես ինքզինքս չեի կարծեր այնչափ մեծ մարդ, որչափ որ կկարծե այս խմբագիրն, բայց հարկավ ան ինձմե աղեկ զիտե իմ որչափ մեծ ըլլալս, վասնզի խմբագիր մ’է և ուսումնական է....»:
  3. «Կար ժամանակ մը, ուր խավարը լուսու դեմ կը կրվեր, տղիտուրյունը գիտուրյան դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրիչի դեմ, ատելուրյունը սիրու դեմ, կրակը ջուրին դեմ, միաը բանջարեղենին դեմ...»:
  4. «Աս չըլլար. միայն իրենց մորը արգանդին մեջ գտնվողները չունին իրենց պատկերը. եթե անոր ալ ոյուրին մեկ ճամփան գտնեն, անոնց ալ պիտի հանեն»:
- 1) 1-ա, 2-զ, 3-բ, 4-դ
  - 2) 1-դ, 2-բ, 3-զ, 4-ա
  - 3) 1-զ, 2-ա, 3-դ, 4-բ
  - 4) 1-ա, 2-դ, 3-բ, 4-զ
- ա. Խմբագիր  
բ. Քանաստեղծ  
գ. Մանուկ աղա  
դ. Արիստոն աղա

63

### Տրված հատվածներից ո՞րը որ ստեղծագործությունից է:

1. – «Վարձա կն ահա, տեղ բացեք,  
վարձակլ, վարդ տեղացեք.  
Մազերուն մեջ, ոտքին տակ  
մարգարիտնե ի լեցուցեք»:
2. Ես ուզեցի լուռ մենանալ,  
Սիրել փղթիք, խորշեր բավուտ,  
Սիրել կայծերն երկնի կապուտ,  
Աստրվան շաղն, իրիկվան բալ,  
ճակատագրիս սև զիծ կարդալ,  
Խոկալ, սուզիլ, զգմայլիլ սուտ:
3. Թույլ շրջյուն մը, հետո բույր մը մշկենի.  
Եվ համրագին գիրքը ձեռքես կ' իյնա վար.  
Երազներու պերճուիին է որ կ'անցնի,  
Ու կը փորի ծովակն հոգվույս՝ մեղմավար:
4. Կ'ըլլան մարդիկ, որ լացող մը չ'ունին,  
Անոր համար Նա դրրավ այդ լուսին.  
Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,  
Նախ՝ կյա՞նքը, վերջը՝ լացող միր վրան:
- 1) 1-ը, 2-դ, 3-ա, 4-գ  
2) 1-գ, 2- ա, 3-դ, 4-ը  
3) 1-ը, 2-ա, 3-դ, 4- գ  
4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ը

64

### Քանի՞ անկախ դերքայ կա տրված հատվածում:

Տեղ է հասել ու տեսել, որ կնոջ ներկայությունը տղաներին ոգևորել է, նրանց թմրած ջղերը կենդանացրել, և յուրաքանչյուրը կարծում է՝ նրա ուզածն ինքն է: Եկել են խանութ՝ առևտուր անելու, գիտեն՝ ինչ են առնելու և ինչքան: Խանութին մոտենալիս պառավներից մեկը, ճանաչելով մեզանից սերվածին, փորձել է խոսքի բռնվել, բայց հանդիպել է նրա խայթող հայացքին ու հետ կանգնել իր մտադրությունից:

65

### Բառերից քանիս՞ն հնչյունափոխություն կա.

ալյակ, ուխտադրուժ, պատանյակ, ազնվական, լուսաբաց, աղեխարշ, պետականություն, թթվահամ, երգչախումբ, նստակյաց, անքափր, հնչեղ:

66

### Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.

շավիղ, կերուխում, պատրվակ, օճորք, առիթ, խրախճանք, զղզում, ձեղուն, քեֆ, արահետ, առաստաղ, կածան:

67

### Նշել այն նախադասությունների համարները, որոնցում պարագա ստորադաս նախադասություն կա:

1. Բոլորը հասկացան՝ հենց Արամայիսը խանգարեց գործի կարգավորմանը
2. Նրանք հավաքվեցին խարույկի շորջը, հենց կրակի բոցերը մի փոքր մեղմացան:
3. Երբ հասան լեռնաշղթայի փեշերին, երեխաները ցրվեցին տարրեր կողմեր:
4. Թեպետ Մարատը գործը կատարում էր անթերի ու արագ, տնօրենը դարձյալ դժգոհում էր:

68

Նշել այն շարքերի համարները, որոնցում ճիշտ համապատասխանեցված տրված բառերի արևելահայերեն և արևմտահայերեն տարրերակները:

1. օբյեկտիվ – ենթակայական
2. սկզբող – կարծրախոտ
3. դեմագոգ – համայնավար
4. կոմունիստ – ամրոխավար
5. սուբյեկտիվ – առարկայական
6. ռեալիզմ – իրապաշտություն

69

Նշել հատվածների ճիշտ հաջորդականությունը:

1. Հավաքվում են, շուրջը պատում,  
Սեզն են ընկնում խելագար...
2. Ըշտապելուց թե են առել,  
Դարձել թերեւ թիթեռներ..
3. Որտեղ ճրագ, որտեղ կըրակ,  
Որտեղ լույս է հենց վառվում...
4. Ասում են, թե՝ էն Փարվանա  
Զահիլներն են սիրավառ...
5. Ու տակավին հուր տեսնելիս  
Սեզն են ընկնում անհամբեր...
6. Ասում են՝ էն թիթեռները,  
Որ գիշերվա խավարում...

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր **Ճիշտ է, Այսալ է, Չգիտեմ** տարրերակներից որևէ մեկը:

1. Հարակատար դերբայը կարող է կատարել ձևի պարագայի, ժամանակի պարագայի, որոշչի պաշտոններ:
2. Բոլոր անկախ դերբայները կարող են կատարել որոշչի պաշտոն:
3. Բոլոր անկախ դերբայները կարող են կատարել ժամանակի պարագայի պաշտոն:
4. Անորոշ դերբայը կարող է հանդես գալ բաղադրյալ ստորոգյալի կազմում:
5. Անորոշ դերբայը կարող է կատարել որոշչի և հատկացուցչի պաշտոններ:
6. Անորոշ դերբայը գործիական հոլովով կարող է դառնալ ձևի, ժամանակի և տեղի պարագա: